## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«17» հուլիսի, 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու /Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳՀՊ**) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հարություն Դավթյան՝** (Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալ

**Անուշ Բոչուլյան՝** (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական կարգադրիչների ծառայության ֆինանսաբյուջետային բաժնի ավագ մասնագետ

**Ռոզա Եղիազարյան՝** (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական կարգադրիչների ծառայության անձնակազմի կառավարման բաժնի մասնագետ

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

**Ալինա Պոչիկյան՝** (Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ դատական կարգադրիչների ծառայության ֆինանսաբյուջետային բաժնի պետ

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/27» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2018թ.-ի հուլիսի 17-ին, ժամը 12:00-ին:

**2. Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | *Վերնաշապիկներ* | **2 417 800** |
| 2 | *Վերնաշապիկներ* | **259 200** |
| 3 | *Արտադրական հագուստ* | **1 360 000** |
| 4 | *Արտադրական հագուստ* | **2 720 000** |

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը (անունը) | Էլեկտրոնային փոստի հասցեն |
|---|---|
| «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ | lida@arminco.com |
| «ԴԵՐԶԱԿ» ՍՊԸ | derzak2013@mail.ru |
| «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ | elaam@bk.ru |
| «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ | kkfactory@rambler.ru |

**4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«Քանաքեռի կարի ֆաբրիկա», «Ֆիրմա Լիդա», «ԴԵՐԶԱԿ» և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

«Քանաքեռի կարի ֆաբրիկա», «Ֆիրմա Լիդա», «ԴԵՐԶԱԿ» և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

6. **Մասնակիցների առաջարկած գները՝**

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «ԴԵՐԶԱԿ» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | ***Վերնաշապիկներ*** | 1 632 800 | 326 560 | 1 959 360 |
| 2 | ***Վերնաշապիկներ*** | 187 200 | 37 440 | 224 640 |
| 3 | ***Արտաղրական հագուստ*** | 1 100 000 | 220 000 | 1 320 000 |

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | /տառերով և թվերով/. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 2 | ***Վերնաշապիկներ*** | 275 760 | 55 152 | 330 912 |
| 3 | ***Արտադրական հագուստ*** | 1 120 000 | 224 000 | 1 344 000 |
| 4 | ***Արտադրական հագուստ*** | 2 240 000 | 448 000 | 2 688 000 |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | ***Վերնաշապիկներ*** | 2 091 240 | 418 248 | 2 509 488 |
| 2 | ***Վերնաշապիկներ*** | 239 760 | 47 952 | 287 712 |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | ***Վերնաշապիկներ*** | 2 826 000 | 565 200 | 3 391 200 |
| 2 | ***Վերնաշապիկներ*** | 324 000 | 64 800 | 388 800 |
| 3 | ***Արտադրական հագուստ*** | 1 100 000 | 220 000 | 1 320 000 |
| 4 | ***Արտադրական հագուստ*** | 2 200 000 | 440 000 | 2 640 000 |

**Հանձնաժողովը որոշեց.**

7. Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով մասնակիցների առաջարկված նվազագույն գները հավասար են: Նշվածով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով նշված չափաբաժնի մասով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած **«Ֆիրմա Լիդա»**, **«ԴԵՐՁԱԿ»** և **«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ**-ների հետ վարելու միաժամանակյա բանակցություններ՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

-նիստը կասեցնել, և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2018թ. հուլիսի 20-ին՝ ժամը 11:00-ին, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

***Գնահատող հանձնաժողովի նախագահ՝***

Ա. Ավագյան

(ստորագրություն)

***Հանձնաժողովի անդամներ՝***

Հ. Դավթյան

(ստորագրություն)

Ա. Բոջուկյան

(ստորագրություն)

Ռ. Եղիազարյան

(ստորագրություն)

***Գնումները համակարգող՝***

Օ. Աստրյան

(ստորագրություն)